
ՀՈՒՇԵՐ ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի երկարամյա գիտաշխատող Արփիկ Ավետիսյանի՝ տատիկիս (1912–1991) արխիվում մի մաշված, քրքրված կապիչներով թղթապանակ կար: Այն բացելու անհրաժեշտությունը միշտ հետաձգվում էր, քանի որ մյուս՝ առավել հաստափոր ու չափազանց հետարքրիր բովանդակությամբ նյութերը ժամանակ չեն թողնում բացելու այս մեկը: Եկավ նաև դրա հերթը. դեղին, խոնացած էջերին տատիկիս գրամեքենայի ծանոթ տառատեսակն էր: Վերնագիրը չափազանց հետաքրքրեց՝ «Բմ հուշերը՝ կապված Դերենիկ Կարապետի Դեմիրճյանի հետ»: Հուշերի հեղինակը Դերենիկ Դեմիրճյանի սիրելի կանանցից մեկն էր: Տերստից ակնհայտ էր՝ նա հուշերը տատիկիս է հանձնել այն տարիքում, երբ նրբանկատ ու խելացի երևալու ցանկությունն արդեն ուսերի ետևում էր: Ո՞վ է այս կինը՝ Գայանե Ավետիսյանը (1908–1986): Գ. Սունդուկյանի անվան թատրոնի դերասանուին: Ինչո՞ւ է իր հուշերը վստահել տատիկիս: Հուշերն ընթերցելիս՝ պարզվեց, որ տատիկս ու Գայանե Ավետիսյանը նույն դպրոցում են սովորել: Հետևաբար, կարող եմ միայն ենթադրել, որ արդեն հասուն տարիքում նրանք հանդիպել են, և Գ. Ավետիսյանը պատմել է իր հիշողությունները վաղեմի ընկերություն:

Զգիտեկ՝ Գայանե Ավետիսյանի պատմությունը հայտնի⁷ է Դեմիրճյանի կենսագիրներին: Դ. Դեմիրճյանի տուն-թանգարանի վարիչ Կարինե Ռաֆայելյանն ասաց, որ Գայանե Ավետիսյանի մասին գրավոր նյութեր առանձնապես չկան: Դեմիրճյանն իր հուշերում նրան հիշատակել է միայն անվան առաջին տառով կամ ներկայացրել՝ որպես «Գարուն»: Գայանե Ավետիսյանը Վարպետի օրինական կինը չէր: Կ. Ռաֆայելյանը պատմեց, որ, ըստ Վարպետի քրոջ աղջկա՝ Նատալիա Շիրինյանի՝ Դեմիրճյանը զերծ է եղել բոլոր կարգի թուլություններից: Ո՞ւ ալկոհոլ, ո՞ւ ծխախոտ, սուրճն անգամ միայն կաթով էր խմում: Բայց Վարպետն ունեցել է մեկ թուլություն՝ կանայք: Դեմիրճյանը երկու անգամ օրինական ամուսնություն է ունեցել, առաջին կինը Մարիամ Կանայանն էր՝ Դրաստամատ Կանայանի քույրը: Մարիամը շուրջ 15 տարի փորք էր Դեմիրճյանից: Եղել է նրա սանուիին Թիֆլիսի Մարիամյան-Հովհաննյան դպրոցում: Ունեցել են երկու որդի՝ Արտաշեսը, որը մահացել է 2 տարեկանում, և Վիզենը, որն ապրել է մոտ 60 տարի և ունեցել է մտավոր խնդիրներ: Մարիամը վաղ է մահացել: Նրա մահից մի քանի տարի անց Դեմիրճյանը հանդիպել է երկրորդ կնոջը՝ ազգությամբ ռուս Մարիա Միխայլովնա Խվանվային: Մինչ Դեմիրճյանին հանդիպելը՝ տիկին Մարիան արդեն ամուսնացած էր և ուներ որդի, սակայն նրան թողնելով ամուսնու մոտ՝ սկսել է ապրել Դեմիրճյանի հետ: «Եթե հավատանք քանավոր պատումներին,՝ պատմում է Կ. Ռաֆայելյանը,՝ այդ կնոջը Դեմիրճյանի համար Չարենցն է փախցրել: Սա վարկած է, որը դեռևս լուրջ հիմնավորումներ չունի: Դեմիրճյանը 37 թ., հականալի պատճառներով, շատ խնամքով թաքցրել է իր և Չարենցի մտերմութ-

յունը»: Ի դեպ, Մարիա Միհայլովնան հրաժարվել է Դեմիրճյանից զավակ ունենալ՝ մտավախությամբ, թե երեխան կարող է հիվանդ լինել, ինչպես Վիգենը:

Գայանե Ավետիսյանը՝ մինչ Դեմիրճյանի հետ կապվելը, ևս ամուսնացած էր և ուներ որդի: Նրա ամուսինը 1941 թ. գոհվել էր Հայրենական պատերազմում: 1943 թ. ծնվել է 35-ամյա Գ. Ավետիսյանի և 65-ամյա Դ. Դեմիրճյանի որդին: Այս երեխային ևս Վիգեն են կոչել: Հետաքրքիր պատմություն կա. Ավետիք Խասհալյանը, Լևոն Շանթը ու Դերենիկ Դեմիրճյանը որոշել էին որդի ունենալու դեպքում անվանել Վիգեն՝ ի պատիվ Անիկի իշխաններից մեկի, որի անունը ևս Վիգեն էր: Երեքն էլ ունեցան արու զավակ: Երեքն էլ նրանց տվեցին Վիգեն անունը: (Լևոն Շանթի Վիգենը 1943 թ. ոմբակոծության ժամանակ իր հարսնացուի հետ զիշվել է): Վիգեն Դեմիրճյանը մահացավ 2013 թ.: Հենց նա էլ իր մոր՝ Գ. Ավետիսյանի լուսանկարները փոխանցել է Դ. Դեմիրճյանի տունքարանին:

Հրապարակվող հուշերը ներկայացվում են կրատումներով և խմբագրված:

ԼԻԼԻԹ ԱՎԱԳՅԱՆ

ԻՄ ՀՈՒՇԵՐԸ՝ ԿԱՊՎԱԾ ԴԵՐԵՆԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՀԵՏ

Ես փոքր հասակից զրկվել եմ հարազատ հորից, և խնամքս տարել է իմ մեծ եղբայր Մաքսու Հարությունի Ավետիսյանը, որն ավարտել է Էջմիածնի ճեմարանը: Նրա ուսուցիչն է եղել Մեծ Կոմիտասը, և հենց դա էր պատճառը, որ ես մասնուկ հասակից սիրել եմ արվեստը, երգն ու երաժշտությունը: Մեզ մոտ էին հավաքում երաժիշտներ Ռումանոս Մելիքյանը, Արմեն Տիգրանյանը, Շարա Տայյանը, որոնք մեր տանը կատարում էին «Անուշ» օպերայի փորձերը:

Եղբայրս ջութակ էր նվազում, հաճախ էր լինում անզիջական մանկատանը (ներկայիս Թումանյան փողոցում, անցյալում՝ Դոկտորակայա 20): Մանկատունը մեր տան դիմաց էր, որի սաները բեմադրում էին ներկայացումներ, զիլավոր դերերում խաղում էին մանկատան սաներ Պարոնիկյան Մայրանուշը (Թութուշ), այժմ՝ ՀՍՍՀ վաստակավոր դերասանուհի: Ես էլ մինչ դպրոցն ավարտելը մասնակցում էի թատերական խմբակներում (ինքնազործ): Երբ բեմադրեցինք Պանջուլազյանի «Մասոն վարդապետի հարսանիքը», սովորում էի 8-րդ դասարանում, խաղում էի Նազուի դերը, իսկ զիլավոր դերը կատարում էր Գուրգեն Մելիքսերյանը՝ Արել: Դպրոցն ավարտելուց հետո ինձ ձգում էր արվեստը, և ես ընդունվեցի Վավիկ Վարդանյանի թատերական ստուդիա, որտեղ ուսանում էին նաև Ժենյա Մկրտչյանը, Թամարա Դեմուրյանը, Էղիկ Համբարձումյանը (օպերետի դերասան), և հենց առաջիկա երկու ամսվա ընթացքում խաղացի պատասխանատու դեր, որից հետո Արվեստի վարչությունն ինձ մեկ տարով ուղարկեց Նոր Բայազետի թատրոն՝ աշխատանքի:

1936–37 թթ., Նոր Բայազետի թատրոնում աշխատելուց հետո, ընդունվեցի Գ. Սունդուկյանի անվան թատրոն, որտեղ ինձ մեծ աջակցություն էր ցույց տալիս ընկ. Մելիքսերյանը (այն ժամանակ նա աշխատում էր Արվեստի տանը

և գրադեցնում էր պատասխանատու պաշտոն: Ավելի ուշ նա Արվեստի և գրականության թանգարանի տնօրենն էր):

Այն ժամանակ Գ. Սունդուլյանի անվան թատրոնը հին շենքում էր, 1938 թ. փոխադրվեցինք նոր շենքը (ներկայիս): Սկզբում աշխատում էի՝ որպես կրտսեր դերասանուիի, ապա դերասանուիի:

1941 թ. մեկնեցինք Սոսկվա՝ հայկական արվեստի տասնօրյակին մասնակցելու, որտեղ և լսեցինք սկսվել է Հայրենական մեծ պատերազմը: Արդեն ավարտել էինք մեր 10-օրյակը: Սհավոր խառնաշփոր էր: Ես առաջին անգամ էի Սոսկվայում, և հանկարծ պատերազմ, այն էլ ինչպիսի՝ անսպասելի պատերազմ: Այդ ժամանակ ինձ մոտեցավ Դերենիկ Դեմիրճյանը՝ Վարպետը, օգնեց ճամպրուկներս դնել գնացրում և ասաց. «Դուք գնացեք, իսկ մենք կգանք մյուս գնացրով»: Այդ պահին նա իր գրպանից հանեց մի փոքրիկ բլոկնոտ և ինքուց, որ հայտնեմ իմ հասցեն՝ իբր ցանկանում էր հեռագրել հարազատներին, որ զան ինձ դիմավորելու: Իսկապես այդ էր պատճառը, թե մեկ ուրիշ բան, չգիտեի:

Երբ մենք հասանք տեղ, աննկարագրելի էր՝ ինչ էր կատարվում կայարանում. լաց ու ողբ, բոլոր ապրանքատար և մարդատար գնացքները լիքն էին ուազմաճակատ մեկնող երիտասարդներով: Փողոցները դարձել էին ամայի, պակասել էին տղամարդիկ: Չորս կողմը գոռում-գրցուն էր: Այդպես էլ ինձ ոչ ոք չղիմավորեց, և մենք ընկերներով ամենքս գնացինք մեր տները:

Ես գնում էի փորձի: Մի քանի օրից հետո սուն եկա, և մայրս ասաց, որ մի շատ պատկառելի մարդ եկել ու ինձ է հարցրել ու նկարագրեց նրա արտաքինը: Ես անմիջապես կոսիեցի, որ դա ինքը՝ Վարպետն է եղել: Մայրս ասաց, որ նրան հետաքրքրել է, թե արդյո՞ք շատ եմ հուզվել, և հայտնել, որ շուտով հաղթանակ կլինի, մերոնք շուտ կվերադառնան: Միայն ինդրել է հայտնել ինձ, որ ես հաջորդ օրը փորձից հետո լինեմ տանը:

Մենք բեմադրում էինք «Երկիր հայրենին», և Վարպետը միշտ լինում էր մեր փորձերին:

Մեկ անգամ, փորձից հետո, ինձ մոտեցավ Դեմիրճյանը և հարցրեց անունս: Պատասխանեցի, որ իմ անունը Գայանե է, բայց իմ հարազատներն ինձ «Գարուն» են ասում: Նա ասաց, որ իմ անունը լավն է, որ ինքը շատ է սիրել այդ անունը և այդ անվան հետ շատ հուշեր ունի կապված, որ ես էլ այդ անվան տիրոջը շատ եմ նման: Ես, իհարկե, ոչինչ չկոսիեցի: Երկար տարիներ անց, ուրիշի միջոցով, իմացա, որ Դեմիրճյանի առաջին կինը եղել է իր աշակերտուիին և անունն էլ եղել է Մարիամ: Այնժամ ես ամեն ինչ հասկացա:

Նա փորձերի ժամանակ միշտ սև բերետ էր կրում, բայց մի քանի ամիս հետո փորձերին մասնակցում էր առանց բերետի, և աղջիկները (Դորա Այարտյանը, Բելա Խսահալյանը, Ժենին և այլն) կատակով ասում էին. «Գայանեն Վարպետին ջերմացրել է, բայց երևույթին. նա էլ բերետ չի հագնում»: Եվ ոչ մի հետին միտք: Վարպետն իր վարքագծով և վարվելածեով այնպես կարողացավ ինձ իր հետ կապել, որ ես մեծ բավականությամբ գրուցում էի նրա հետ: Մի անգամ, փորձից հետո, նա առաջարկեց ինձ իր հետ զնալ իր սունը՝ Արովյան փողոց. քանի որ ես երաժշտություն շատ էի սիրում, նա խոստացավ ինձ համար ջութակ նվազել: Բայց ես փորձից հետո մյուս մուտքով զաղտնի հեռացա թատրոնից, որպեսզի նա ինձ չտեսներ, և իր սունը չտաներ, քանի որ

նրա տանը հիվանդ տղա կար՝ իր տղան՝ Վիգեն անունով։ Ճիշտն ասած, ես վախենում էի, որ կզնամ ու կտեսնեմ նրան։

Հաջորդ օրը Վարպետը, մինչև փորձի վերջանալը, հարցրեց, թե ինչո՞ւ եմ ես խուսափել իր տունը գնալուց։ ինչպէս ու էր նա այդ կոսիել, չգիտեմ։ Նա թատրոնից դուրս ինձ Գարուն էր անվանում (իր «Գարուն» ժողովածուն էլ նվիրել է ինձ ու զրել՝ «Հեղինակից Գարունին») և շատ էր ցանկանում ինձ հարազատ լինել և ասաց։

— Գարուն, դու վախեցար իմ որդուց, նա տանը չէ, մեկ օր մնալու է քրոջ մոտ։

Ես համաձայնվեցի և գնացի նրա հետ իր տուն։ Ներս մտնելուն պես, իր առվորության համաձայն, նա լվացվեց, ինձ առաջարկեց ևս լվացվել, որից հետո անցանք իր առանձնասենյակը։ Նա վերցրեց ջութակը և ասաց. «Դուք գնացեք ձաշասենյակ և այնտեղից ավելի լավ կլսեք իմ նվազը»։ Ես գնացի, և նա սկսեց նվազել «Ալմաստ. օպերայից Աշուղի արիան։ Ես այդ պահին կարծես վերացել էի աշխարհից, ուղղակի հրաշք էր, և ես ցանկացա դրան ձեղքից նայել ու համոզվել՝ իրու ք նա էր նվազում, եթե այու, ինչու ինձ ասաց՝ գնացեք ձաշասենյակ։ Եվ ես համոզվեցի, որ իսկապես ինքն էր նվազում, բայց ինչպիսի դեմքի միսիկա ուներ, հնարավոր չէ նկարագրել։ Ես անսիջապես հեռացա դրոնից, որպեսզի այդ տպավորությունը միշտ մնա ինձ համար՝ որպես մի գեղեցիկ հուշ։

Վարպետն ինձ համար գրամերենա գնեց, և ես հաճախ տպագրում էի նրա աշխատությունները։ Մի անգամ իմ եղբոր աղջիկը՝ Օֆիկը, եկավ ինձ մոտ գործ ուներ տպագրելու։ Վարպետը նրան տեսնելով տպագրելիս՝ շատ ուրախացավ և ասաց. «Դուք է՞ լ տպագրել զիտեք»։ Դեմիրճյանի գնած գրամերենայով տպագրել ենք նաև բանաստեղծ Սարմենի աշխատանքները։ Մի անգամ Վարպետը հարցրեց, թե է՞ ու եմ Սարմենին ասել, որ գրամերենան ինքն է գնել, պատասխանեցի՝ այու։

Նա անշափ ուրախանում էր, երբ նամակ էր զալիս ռազմաճակատում գտնվող իմ եղբորից, ուրախանում էր եղբորս գրած լավ լուրերից։ Մեկ անգամ էլ զինվորական տարած հազար եկավ ու ասաց, որ եկել է ինձ տեսնելու, քանի որ որոշել է մեկնել ճակատ։ Սայրս շատ զարմացավ և ասաց. «Բա Դուք կողմանա ք այդ դժվարին պահերին»։ Նա միայն պատասխանեց. «Սայրի կ շան, հայրենիքի սերն է կանցում»։

Ես ցանկանում եմ զրել նրա բնավորության որոշ գծերի մասին։

Նա միշտ, երբ զալիս էր մեր տուն, առաջին հերթին հետաքրքրվում էր մեծ որդուս ուսման գործերով, նոր միայն զբաղվում փոքրիկ Վիգենով։ Սայրս փոքրիկ Վիգենին առվորեցրել էր խավիծ ուտել, մի «պոչով. աման ունեինք, որով կերակրում էինք նրան։ Դեմիրճյանն ասում էր. «Գնա տատիկին ասա քո պոշով ամանով թեզ խավիծ ուտացնի», իսկ ինքը զբաղվում էր մեծ տղայիս՝ Շատրիկի դաստիարակմամբ, որը 11 տարեկան էր։ Հայրը զոհվել էր 1941 թ. դեկտեմբերին, Կերչում։

Դեմիրճյանը մեր ընտանիքում իրեն այնպէս հարազատորեն էր դրսնորել, որ տղաս հոր բացակայությունը չէր զգում։ Իսկ եթե մի օր չէր զալիս, անսիջապես տղաս հարցնում էր. «Մամա, ինչու Դերենիկ քեռին չեկավ»։ Վարպետը հաճախ ասում էր ինձ ու մայրիկիս. «Լավին՝ լավով, վատին՝ վատով պա-

տասիանելն առևտուր է: Աշխատեք վատությունը լավով հատուցել, որպեսզի նրա հոգեբանության վրա ազդեք»:

Մի անգամ ավագ որդուս բերանում թուղթ նկատեցի և ասացի, որ հանի բերանից, նա պատախանեց. «Ապա ինչպէս և է մեծ Վիզենը միշտ թուղթ ուտում»: Այն ժամանակ ներս մտավ Վարպետը և անմիջապես ինձ ասաց, որ ես իրենց մենակ թողնեմ (նախասենյակում նա լսել էր մեր խոսակցությունը): Նրա գնալուց հետո տղաս պատմեց, որ Վարպետը նրան հարցրել է. «Այդ թուղթը, որ դրել էիր բերանդ, ի՞նչ էիր զգում՝ գրա ծ թուղթ էր, թե՝ մաքուր»: Եվ որպեսզի տղաս դուրս գա այդ վիճակից, պատախանում է, որ թուղթը գրած էր ու շատ համով: Հաջորդ օրը Վարպետը նորից հետաքրքրվեց, թե Ռադիկը նորից է թուղթ ուտում: Ասացի, որ դա ուղղակի պատահականություն էր, որ ես նրա բերանում մի փոքր թղթի կտոր էի նկատել և բարկացել վրան:

Մեծ Վիզենին մի անգամ բերեց մեզ մոտ. առաջին անգամ էր: Նա ցանկանում էր, որ մեր աշքն էլ սովորի: Երբ ես թատրոնից եկա տուն, մայրս ինձ զգուշացրեց, որ Վարպետն ու տղան մեր տանն են: Երբ ես ներս մտա, մեծ Վիզենը ժամանակ սկսեց դիվանի վրա թուղուտել: Ես մի պահ վատ զգացի: Հենց որ Դեմիրճյանն ասաց. «Վիզեն՝, չի կարելի», նա անմիջապես թողեց:

Եվ նա զգաց, որ մեզ համար, հատկապես փոքր Վիզենի համար, դժվար է նրա հետ միասին լինելը:

Վարպետը շատ էր սիրում մայրիկիս հետ զրուցել, անմիջապես գրպանից հանում էր փոքրիկ բլոկնոտը: Մայրս ոչ թե խոսում էր թվականներով, այլ իրադարձություններով. «Խոլերի (Խոլերայի – Լ. Ս.) տարին, զնացքը որ եկավ, Խրիմյան Հայրիկի ժամանակ, Լորիս Մելիքովի ժամանակ», և Դեմիրճյանն անմիջապես զրի էր առնում՝ ինչ մայրս պատմում էր իր հիշողություններից, որոնք կապված էին թուրքերի հետ:

Մի անգամ ասացի, որ երեխաները կոշիկ չունեն, մրսում են (պատերազմի տարիներն էին), Վարպետը խորհուրդ տվեց կոշիկների մեջ և մեջքին թերթեր դնել. տաք կապահի: Ես կատարեցի նրա խորհուրդը, և, իսկապես որ, դա շատ էր օգնում:

Նա պատմեց, որ իր տուն մի ուսանող է զնացել և ապշած տնտղել է բնակարանը՝ փոխանակ իրեն նայելու. ուսանողն ուղղակի զարմացել է, որ Վարպետի բնակարանը եղել է շատ համեստ կահավորված: Դեմիրճյանն այդ ուսանողին ասել է. «Հարգելի՝ ուսանող, եթե Դուք եկել եք՝ ինձ հետ զրուցելու, ապա խոսեք ինձ հետ, իսկ եթե Ձեզ իմ տան կահ-կարասին է հետաքրքրում, զնացեք ունիվերսազ և տեսեք՝ այնտեղ ինչ կահ-կարասի կա»: Նա, առհասարակ, շատ համեստ մարդ էր և նման բաներին երբեք ուշադրություն չէր դարձնում և միշտ ասում էր. «Աշխատիր խոհանոցդ հարուստ լինի» (սննդի տեսակետից):

Մեկ անգամ Վարպետը ջութակով եկավ մեզ մոտ և սկսեց նվազել՝ առանց նոտաների: Եղբայրս, որ նույնպես ջութակ էր նվազում, ուղղակի շատ զովեց և հիացավ նրա հիշողության վրա: Նա դարձյալ նվազեց մյուս սենյակում, իսկ մենք լսում էինք ճաշասենյակից:

Մայրս ծեսերին միշտ յուղու փլավներ էր պատրաստում, իսկ որպեսզի մայրս չնեղանար, Վարպետն ասում էր. «Շատ զգույշ իմ ափսեն փոխիր և առանց յուղի փլավ տուր. յուղը վտանգավոր է»:

1943 թ. ահավոր վիճակի մեջ էինք, քաղցած, չգիտեի ինչ անել, մանավանդ փոքրիկ Վիզենը երեք ամսեկան էր. ամեն ինչ վաճառում էինք, որպեսզի մեր գոյությունը պաշտպանենք (այդ մասին Վարպետը գրել էր իր նամակներից մեկում, որը հանձնել էմ Արվեստի և գրականության թանգարանին). «Եկա, երեխաներին տեսա, շատ էին նիհարել, և քո իրերը վաճառել են լոմբարդում (հարևան Ռոզան ասաց այդ մասին): Ինչո՞ւ էս ինձնից պահել»: Ես չի ուզում, որ Վարպետը հուզվեր մեր վատ ապրելու կապակցությամբ: Եղբորս տղան էլ մեզ մոտ էր, մայր չուներ, հայրն էլ ռազմաճակատում էր:

Մյուս օրը Վարպետը շատ ուրախ տրամադրությամբ եկավ և ինձ ասաց. «Թո՞ղ թատրոնը, որ երեխաները և դուք սովամահ չլինեք: Ես խոսել եմ Սննդառ-միության նախազահ ընկ. Ներսիսյանի հետ (1943 թ.), որ դուք գնաք «Կարմիր հացագործում» աշխատեք, իսկ նրա տղան էլ պետք է զա ինձ մոտ և ջութակի դասեր սուսնա»:

Ես մեծ դժվարությամբ թողեցի բեմը և գնացի «Կարմիր հացագործ»՝ աշխատելու. կատարում էի ամեն տեսակի աշխատանք (հաց մաքրել, աման լվանալ, որպեսզի մեր գոյությունը պաշտպանեինք, իսկ եթե հանկարծ սպիտակ հաց էր ձեռքս ընկնում, պահում էի Վարպետի համար, որը երբեմն զայիս էր ինձ մոտ: Սունդուկյանի թատրոնից շատ դերասաններ էին զայիս: Լավ դիրեկտոր ունեինք՝ ընկ. Խաչատոր Վարդանյանը (կոմունիստ էր), նա շատ էր օգնում, հաց էր տալիս, որ տայի նրանց (փորձից էին զայիս): Եվ այսպես մեր կյանքը կանոնավորվեց:

Վարպետը միշտ ասում էր, որ երբ փոքր Վիզենը դառնա տասը տարեկան, ծննդյան օրվա թամադան ինքն է լինելու (և, իրոք, ամեն տարի հունվարի 5-ին կատարում էր ծննդյան օրը): Երբ Վիզենի տասը տարին լրացավ, առավոտյան նա երեխաների հետ անցկացրեց, իսկ երեկոյան արդեն հավաքվել էին բավական մարդիկ, և Վարպետը վերցրեց բաժակը ու խսեց Վիզենի ծննդյան առթիվ և ասաց. «Իմ իդար կատարվեց, ես տոնեցի Վիզենի տասնամյակը» (մինչև 14 տարեկան տեսավ Վիզենին): Բոլորը խսեցին մեծ ուրախությամբ, և սեղանակիցներից մեկն ասաց. «Հարգելի Շեմիրճյան, մաղթում եմ, որ նրա հարսանյաց թամադան էլ լինեք»:

Վարպետն ասաց. «Դեռ մի՛ խմեք, քիչ ինձ լսեք: Մի լորեցի մի ագրավ ձեռքին՝ գնում է: Մի զուտացի նրան ասում է. «Այդ ագրավը ի՞նչ է, որ տանում ես, էլ ուրիշ լավ թոշուն չկա»: Նա պատասխանում է. «Ասում են՝ էս ագրավը հարիր տարի ապրումա, ելա տեսնեմ՝ ձիշտ է՝»: Գյուղացին ասում է. «Ճիշտ է, հարյուր տարի կապրի, բայց դու այնքան կապրէ ՞ս, որ ագրավի մահը տեսնեսո՞: Իհա րկե, Վիզենի հարսանիքին թամադա կլինեի, բայց ես այդքան կապրէ ՞մ»: Բոլորը մի պահ լրեցին, հուզվեցին: Այդ ժամանակ ներս մտավ փոքրիկ Վիզենը՝ ձեռքին իր ոսկեմազ կատուն, և մոտեցավ հորը՝ Շեմիրճյանին, խնդրեց, որ կատվին երշիկ տա: Այդ պահին բոլորի տրամադրությունը բարձրացավ, և ծիծաղեցին: Վիզենը շատ էր սիրում իր կատվին և նստած, ուրախ տրամադրությամբ, քեֆ էր անում:

Պետք է ասեմ, որ Վարպետը բավական բարդ բնավորություն ուներ: Երբեմն զայիս էր՝ բարձր տրամադրությամբ: Նա շատ էր սիրում երեխաներին և դեռ բակը չմտած՝ բոլոր երեխաները վազում էին՝ բացականչելով. «Վա յ, Վիզենի պապան եկավ»: Եվ նա բոլորին հրավիրում էր վերև՝ պատշաճ, ասե-

լով՝ «Սպասե՛ք, իհմա կզամ»: Լվացվում էր և ինձ ասում. «Որոշ քաղցրավենիք բեր»: Երեխաները նստում և սպասում էին, որ իհմա Դեմիրճյան պապիկը պետք է մի լավ բանով պատվի իրենց: Վարպետը նստում էր (օրվա հերոսը՝ փոքրիկ Վիգենը, իրեն լավ էր զգում) և ասում. «Դե՛, երեխաներ, որ ես իմ ձեռքը բարձրացնեմ, բոլորդ լրում եք և լուրջ նայում եք ինձ»: Բայց երեխաները, որ տեսնում էին, իրենց ծիծաղը զայել չէին կարողանում, սկսում էին բոլորը միասին ուժեղ ծիծաղել, և Վարպետն ասում էր. «Լո իրջ, լո իրջ», բայց իր աչքերից էլ էին ուրախության արցունքները հոսում:

Նա շատ կապված էր երեխաների հետ, մանավանդ այն երեխաների, որոնք Վիգենի հետ գնում էին մանկապարտեզ:

Վիգենը հիվանդացավ, և ինքը կարգադրեց, որ լուծույթի մեջ թրջված մասներ կապեն դոների բռնակներին, իսկ մայրս դեմ էր նման բաներին և ասաց.

– Դերենիկ՝ կ, ես 12 երեխա եմ ծնել ու պահել, բայց այսպիսի բան չեմ տեսել, որ բռնակներից վարակվեն:

Վարպետն ասաց. «Քանի՞ երեխա է Ձեզ մնացել»: Մայրս ասաց. «Ընդամենը չորսը», Վարպետն ասաց. «Դե՛, մայրիկ, ուրեմն լավ չեք պահել»: Վիգենին լողացնելու ժամանակ միշտ չափում էր ջրի ջերմաստիճանը, որ տաք չլիներ:

Մեր տան նախասենյակում դրված էր ուտելիքի պահարանը՝ դռները բաց վիճակում, և հաճախ էի երեխաների համար քաղցրավենիք պահում: Շատ դժվար էր, բայց Վարպետը մի կերպ ճարում, բերում էր և ինձ հանձնարարում, որ տամ երեխաներին, հատկապես փոքրիկ Վիգենին, որպեսզի ուղիսիտ չմեծանա: Եվ ես նրան մի օր ասացի, որ մեր նախասենյակի ապրող երեխան (Յոդ դասարանցի էր) այդ օրվա քաղցրավենիքը տարել է: Վարպետը ոչինչ չասաց: Նա ինձանցից պահանջեց մի հատ մաքուր թուղթ, վերցրեց և վրան մեծ տառերով գրեց՝ «ՄԻ՞ ԳՈՂԱՅԻՐԾ, ԱՍՈՂԾ Է», որ ինձ ասաց. «Վաղը որ կոնֆետ բերեմ, այս գրածը կդնես վրան»: Այդպես էլ արեցի, և՝ երկրորդ, և՝ երրորդ օրը (նա ասաց, որ մի քանի օր չվերցնեմ): Եվ, իրոք, նկատեցի, որ թղթի դիրքը փոխվել է, բայց ոչինչ չէին տարել: Երբ այդ մասին ասացի Վարպետին, նա շատ ուրախացավ և ասաց, որ այդ երեխայի մեջ, ուրեմն, ազնվություն կա:

Նա հաճախ ինձ ասում էր. «Միշտ հավատա աչքի և ականջիդ»:

Ես, չգիտեմ ինչու (մինչև իհմա էլ չեմ ներում ինձ), Վիգենին տարա ոուսական մանկապարտեզ՝ Իյիշի անվան (Թումանյան փողոց, նախկին Ալավերդյան), և արդեն 10-րդ օրն էր՝ երեխան չէր հարմարվում մանկապարտեզին: Ինքս գնացի իմանալու պատճառը: Դաստիարակչուիին ասաց, որ մեր երեխան զայիս է և ոչ մեկի հետ չի մերվում, նստում է ու կամաց-կամաց արտավում: Ես այս քանը պատմեցի Վարպետին, մայրս նույնպես բողոքեց, որ ես երեխային լացով ու կոծով եմ մանկապարտեզ տանում: Դեմիրճյանն ասաց. «Լա վ, Վիգենին կանչիր և մեզ մենակ թողեք»: Ես գնացի: Մի քանի թոպեից հետո նա ինձ կանչեց, և ես նրա աչքերի մեջ կարդացի, որ շատ չարացած է. կռահեցի, որ իմ իհմարության համար է զայրացել, իսկ Վիգենը նայում էր ներքև: Վարպետն ինձ հարցրեց.

– Երեխային ի՞նչ մանկապարտեզ ես տվել՝ հայկակա՞ն, թէ՞ ոուսական:

Այդ դժվարին վիճակից դուրս գալու համար՝ ասացի, որ այդտեղ կա և՝ հայկական, և ոուսական: Իսկ ինքը իր կտրուկ ու կարծ ոճին համապատասխան՝ ասաց.

– Հայկականը հայկական է, ռուսականը՝ ռուսական:

Ես այլևս ելք չունեի արդարանալու և ասացի ճշմարտությունը: Նա միայն ասաց.

– Ճամպրուկդ չես կապել, որ զնաս Ռուսաստան: Ուստի ժողովրդին ինքս էլ եմ պարտական՝ որպես գրող, բայց իմ որդին պետք է զնա հայկական մանկապարտեզ:

Եվ վեր կացավ՝ շատ զայրացած, առանց բան ուտելու, ինձ ոչինչ չասաց, մայրիկիս դիմեց.

– Դուք վաղը երեխային մանկապարտեզ չտանեք, ե՞ս կտանեմ:

Մյուս օրը, առավոտյան, ժամը 10-ին, եկալ, ու երեխայի հետ զնացին՝ առանց ինձ խոսք ասելու: Հետո ժամը 5-ն եր թե 6-ը, եկավ ուրախ տրամադրությամբ, կարծեք թե ոչինչ չեր եղել, ինձ նայեց բարի ու լավ աչքերով ու ասաց. «Դե՛, Գարու ին ջան, ես քեզ նեղացրեցի, բայց Վիզենին տարա Աջոյի մանկապարտեզը»: Մեր տան մոտ էր, Գնունի 4 (մենք ապրում էինք Շեղատնային վարչության դիմաց): Զաջորդ օրը երեխան վեր կացավ ու ասաց. «Դե՛, տատիկ ջան, զնանք, այնտեղ ոչ մի ոռւս կուկու չկա, բոլորը հայ կուկու են»: Ես հասկացա, որ երեխան լեզու չզիտեր, դրա համար էլ այնտեղ խորթ էր նրան: Այդ մանկապարտեզում էլ մնաց՝ մինչև դպրոց զնալը:

Երբ ես տիկրում էի եղբորս համար, որը ռազմաճակատում էր, Վարպետն ասում էր. «Մարդը հենց նա է, ով օգտակար է իր ազգի համար, ով իր լավ ու գեղեցիկ աշխատանքով, հայրենասիրությամբ նվիրագերում է իր կյանքը: Մարդը այնպէ ս պետք է մեռնի, որ ժողովով լրդը իրեն պարտը մնա, ոչ թե ինքը պարտրով մահանա»:

Նա՝ իր իրատներով ու փիլիսոփայությամբ, մեծ հեղինակություն էր վայելում թե՝ իմ յուրայինների (որոնք ունեին բարձրագույն կրթություն), թե՝ հարևաններին մոտ:

Վարպետը միշտ դուրս էր զայիս՝ ձեռնափայտը ձեռքին և վերարկուն՝ թելին զցած: Մի անգամ ես փորձեցի օգնել նրան անցնելու առվակից: Նա իրեն իիստ վիրավորված զցաց և ասաց, որ դա լինի առաջին ու վերջին անգամը՝ իրեն օգնելը: Ես հասկացա... Երբ նա անցնում էր, ես այնպես էի անում, որ չնկատեր, հետ էի ընկնում: Նա, մինչև քայլը զցելը, մի լավ փայտով տնտղում էր ու հետո անցնում, որից հետո միայն ես միանում էի նրան:

Եթե մեր մասին խոսակցություններ էին լինում (հատկապես տարիքի շուրջ), նա ինձ ասում էր. «Մարդը կարիճ է, մինչև պոչի թույնը չթափի, չի հանգստանա, այնպես որ դրանք դատարկ խոսակցություններ են, կանցնի: Կյանք է, կյանքն էլ՝ մի հերիաթ, միայն քո ուշադրությունը նվիրի, որպեսզի Վիզեն առողջ մեծանա»: Ես էլ ասացի. «Բայ եթե նա մեծանա և հանկարծ որոշ գծեր նմանվի ավագ Վիզենին, իմ վիճակը ծանր կլինի»:

Երևի թե շատեր, եթե Վարպետը չհիշեցներ, որ ես զբաղվեմ կրտսեր Վիզենի առողջական վիճակով:

Նա պատասխանեց, որ մեր Վիզենն առողջ է, ինչպես և ինքը, իսկ եթե որևէ բան պատահի, ապա իր զրցակից ընկերները կօգնեն ինձ: Եվ, իրոք, որոշ հարցերով ինձ շատ է օգնել Գրողների միությունը, ընկ. Թոփշյանը, Հրայր Հովհաննիսյանը, իսկ մյուսներն էլ հետաքրքրվել են Վիզենի վիճակով՝ հարգելի

գրողներ *Ս. Կապուտիկյանը, Սարմենը, Հ. Սիրասը, Հովհաննեսը, Շիրազը և այլն, Սունդուկյանի թատրոնի բոլոր դերասան-դերասանուհիները:*

Վարպետը շատ էր սիրում երգել, և երբ ռադիոն երգ էր հաղորդում, ինքն էլ սկսում էր ձայնակցել՝ իր փոքրիկ ձայնով՝ «Այ բաղմանչի, բաղմանչի». այս երգը շատ էր դուր գալիս նրան:

Նա սովորեցնում էր երեխաներին, որ ամեն իր տանը պետք է իր տեղն ունենա, որ եթե հանկարծ լույս չլինի, նրանք մժության մեջ էլ կողմնորոշվեն ու գտնեն այն: Շատ բժախնդիր էր մաքրության հարցում, նույնիսկ թութն առանց լվանալ թույլ չէր տալիս ուտել:

Նա ինձ շատ էր պատմում Շվեյցարիայի մասին, որտեղ ինքը եղել էր 1905 թվականին: «Շվեյցարիայում մարդիկ, իրար հանդիպելիս, երբեք չեն հարցնում՝ «Ո՞նց ես», և դա ճիշտ է, քանի որ եթե վաս եմ, ինչո՞վ կարող են օգնել, եթե լավ եմ, դրանից իրենց ի՞նչ օգուտ: Երբեք չեն հարցնում՝ «Ու՞ն ես գնում». մարդը գուցե այնպիսի տեղ է գնում, որ դու չպետք է իմանաս կամ գնում է քո գնացած տեղը: Երբ տղամարդն իշխում է շենքի աստիճաններից և հանկարծ տեսնում է, որ կին է իշխում, նա սպասում է՝ մինչև կինն իշխի, նոր միայն ինքը հետևում է նրան:

Ամենամոտ հարազատները՝ մայրը, որդին, քույրը, եղբայրը, նախօրոք պետք է զանգեն, նոր միայն իրար այցի գնան, իսկ իմելու ջուրն աշխարհում առաջին տեղն է գրավում, – պատմում էր Վարպետը:

Վարպետն ինձ ասում էր, որ մարդկանց թվում է, թե ինքը շատ հարուստ է և հաճախ իրենից դրամ են ուզում և, որպեսզի այդ տպակորությունը այդպես էլ մնա, եթե այդ օրը չէր ունենում, ասում էր. «Վաղն եկեք», որպեսզի որևիցե տեղից վերցնի և տա:

Մինչև «Վարդանանք»-ի հրատարակվելը՝ Վարպետն այնքան էլ ապահովված չէր: Նա չէր սիրում, երբ դրամ էին վերցնում և խոստացած ժամանակին չէին վերադարձնում. շատ ճշտապահանջ էր: Մի անգամ թատրոնից մի տղամարդ (որի անունը չեմ գրում) Վարպետից գումար էր խնդրել և չէր վերադարձրել: Մուկվայում, իմ միջոցով, նորից իննդրեց, որ Վարպետն իրեն փող տա: Երբ ես այդ մասին հայտնեցի Դեմիքճյանին, ասաց. «Նա վերցնում է անվերադարձ՝ դեռ ոչինչ, գոնե ասի: Բայց միշտ էլ ասում է՝ այսօր կրերեմ, վաղը կրերեմ և չի բերում: Իրեն ասա, որ փող չունեմ»:

Մյուս օրը, երբ դուրս էինք զալիս թատրոնից, Վարպետն ինձ ասաց. □Գիտե՞ս, Գարո նա, ես նրան փողը տվի, դե մեղք է, ջահել տղա է: □Ես շատ ուրախացա, որ նրան օգնել է օտար տեղում, Մուկվայում:

Վարպետը հաճախ զալիս էր զուրակով, հատկապես Վիզենի համար: Վիզենը երկրորդ դասարանում էր, երբ Վարպետն ասաց. □Վիզենը լավ լսողություն ունի, պետք է տանեմ երաժշտական դպրոց, և ինքն անձամբ տարավ Զայկովսկու անվան երաժշտական դպրոց, որի դիրեկտորն էր հանգուցյալ Հայկանուշ Դանիելյանը: Դանիելյանը փորձել էր Վիզենի լսողությունը և ասել, որ բացի լսողությունից՝ ունի նաև ձայն: Եվ, իրոք, նա ձայն ուներ և երգում էր ինքն իր համար: Դրանից հետո շատ սուլ պայմաններով գնեցինք դաշնամուր՝ «Ըստառով-Դոն», և այդ դաշնամուրը Վարպետը տարավ իրենց մոտ՝ Արովյան 29, որպեսզի Վիզենն ավելի կապվի իրենց տան հետ, և նրա դաշնամուրի դասասոր ընկ. Թագուհի Արամյանը գնում էր Վարպետի սուն և պա-

բապում երեխայի հետ: Սակայն որոշ ժամանակ անց երեխան որոշեց չգնալ. պատճառը մեծ Վիզենն էր, որից հետո դաշնամուրը տեղափոխվեցինք ինձ մոտ, և երեխան սկսեց պարապել: Անուղղակի հետևում էի, թե ինչպես է Վարպետը ուրախ աչքերով նայում Վիզենին ու նվազում՝ ինքը ջութակ, իսկ Վիզենն էլ իր իմացած փոքրիկ էսյուլն էր նվազում: Մինչ այժմ այդ դաշնամուրը պահել եմ: Ես Վիզենի համար գնեցի նորը, երբ նա գնաց նոր բնակարան՝ իր ընտանիքի հետ: Այդ դաշնամուրը պահպանվում է ինձ մոտ՝ նախ՝ որպես մասունք, հետո այն կապված է անցած քաղցր հուշերի հետ: Երբ Դեմիրճյանի համար տուն-թանգարան կկազմակերպեն, ես այդ դաշնամուրը կտամ այդ թանգարանին:

Վարպետի 70-ամյակի օրը փոքրիկ Վիզենն իր մոտ էր: Ներկա էին նաև Իսահակյանի ընտանիքը, գրող Հրաչյա Հովհաննիսյանը: Երբ տիկին Սոֆիկը Վիզենին բարձրացնում և կանգնեցնում է աթոռի վրա, Դեմիրճյանն ասում է. «Տեսէ ք, իսկական իմ պնջից թուած է»: Այդ ժամանակ տիկին Սոֆիկն ասում էր. «Իսկական փոքրիկ Դերենիկն է»: Երբ արդեն ուշ էր լինում, կանչում էր Վիզենի դայակին և պատվիրում երեխային տուն տանել:

Ընկերական շարժեր են տպագրվում «Ոզնի» ամսագրում, լինում է և Դեմիրճյանի նկարը: Վիզենն այդ ժամանակ մանկապարտեզի վերջին՝ Օխմբում էր, եկավ տուն՝ լաց լինելով, և ասաց, որ իր պապային նկարել են, իսկ երեխաները ծիծառել են իր վրա: Երբ հայրը՝ Դեմիրճյանը ... (հաջորդ էջը չի պահպանվել – Լ. Ա.):

...Նա չտեսնված հայրենասեր էր: Ամբողջ օրը միայն ու միայն մտածում էր մեր հաղթանակի մասին և համոզված ասում էր. «Մերոնք շուտով կհաղթանակեն, ու հաղթանակով կզան եղբայրը և բոլորի եղբայրները, ամուսինները, քույրերը»: Նրա հայրենասիրության մեկ օրինակ: Իր քրոջ՝ Դեմիրճյան Սաթենիկի որդիին 1942 թ. եկել էր մի քանի օրով արձակուրդ և ինչ-ինչ պատճառով (նրանք ապրում էին հարևաններով) քրոջ տղան իր ատրճանակով խփել էր իրեն ու տեղնուտեղը մահացել: Դեմիրճյանը տուն եկավ շատ հուզված: Ես ոչ մի բան չասացի և, առհասարակ, երբ նա հուզված էր, ես պետք է լոեի, իսկ հետո ինքն արդեն սկսում էր պատմել, թե ինչու է հուզված: Քիչ անց ասաց. «Քրոջս տղան ինքն իրեն խփեց, իր կյանքին վերջ տվեց»: Ես ու մայրս մի պահ կորցրեցինք մեզ, բայց Վարպետը, առանց իրեն կորցնելու ասաց, որ հուզվելու կարիքը չկա. «Նա համարվում է ազգի դավաճան, նա իր պարտքը չկատարեց, թուլամորթություն արեց»: Հետո ճաշեց շատ հանգիստ, բայց երբեմն դեմքի այտուկրերը բարձրանում և իջնում էին:

Թաղման ժամանակ նա կանգնած էր հեռու և ոչ մի արցունք չթափեց: Երբ մյուս օրը մայրս ցանկացավ նորից խոր վիշտ հայտնել, նա մորս ասաց. «Նա պետք է ընկներ իր հայրենիքի համար՝ որպես ազնիվ զավակ»: Դրանից հետո ոչ մի խոսք չասաց: Միա որքան ազգասեր ու հայրենասեր էր նա: Երբ քրոջ տղայի մահվան 7-րդ օրն էր, ասացի, որ պետք է գնալ զերեզման: Հուզված ասաց, որ այդպիսիններին չեն ափսոսում, նա քուլամորթություն է ցուցաբերել, հետևաբար չպետք է գնալ զերեզման: «Այս ահեղ օրերին իր ժողովրդի ազատության համար պետք է կովում ընկներ»:

Եվ մենք չգնացինք յոթին:

Երբ նա ինձ էր նվիրում իր «Վարդանանք» վեպը, ասաց. «Լավ կպահես. Վիզենը կմեծանա և կհասկանա, որ այս պատմավեպը՝ «Վարդանանքը», որ գրել եմ Հայրենական մեծ պատերազմի օրերին, գրել եմ, որպեսզի մեր երիտասարդները լցվեն հայրենասիրական մեծ զաղափարով: Մի խոսքով, ուզում եմ բարձր տրամադրություն ատեղծել ռազմի դաշտում մեր հայրենիքը պաշտպանող մարտիկների համար»:

Վարպետը շատ էր վախենում մահից, և միշտ Խսահակյանի հետ կատակում էին, թե, տեսնես, իրենցից ո՞վ է շուտ մահանալու: Այն ժամանակ Ալ. Իսահակյանն ապրում էր Գնունի փողոցում, խանութի վերևի հարկում, իսկ մենք՝ նրա կողքին՝ Գնունի 4-ում, Դեղատնային վարչության մոտ և հաճախ էինք այցելում մեկս մուսիս և իրար շատ էինք սիրում:

Դեմիքյանը շատ ազնիվ էր իր զգացմունքների մեջ և միշտ ասում էր, որ մարդն իր իրավունքների մեջ պետք է լինի ազատ, ոչ մեկին չի թույլատրվում մարդու կյանքի վրա բռնանալ, մարդուն տրվում է կյանքը մեկ անգամ և ինչու նա իր իրավունքներում ազատ չին:

Այն ժամանակ, ըստ իմ դատողության, կարծում էի, որ դա միայն ու միայն գրողներին է հատուկ՝ իրենց զգացմունքներում ազատ լինել:

Մի անգամ Վարպետն ասաց. «Գարո նա, ես գնալու եմ Լեռնային Ղարաբաղ: Ճիշտ է, առողջական վիճակս էլ մի բան չի, բայց պետք է գնամ. որոշ բաններ կան, պետք է ուսումնասիրեմ իմ ստեղծագործությունների համար»: Հարցրեցի. «Երկա՞ր ժամանակով»: Ասաց, որ չփոխի. «Բայց իմացիր, մինչև իմ վերադարձը զուցե որոշ խոսակցություններ զան հասնեն քեզ, դրանք դատարկ բաններ են, դու զիտես, որ ես քեզ անկեղծ եմ սիրում, նախ՝ որպես իմ որդու մայր, հետո շատ ազնիվ ու անշահախնդիր ես իմ նկատմամբ՝ բոլոր հարցերում»:

Նրա ձեռնափայտի մասին: Մի անգամ, ներկայացման ավարտից հետո, Վարպետը շուտ էր գնացել տուն: Մեծ մասամբ, եթե մնում էր մինչև ներկայացման ավարտը, մանավանդ՝ իր պիեսների, անպայման ինքն էր ինձ տուն ուղեկցում: Այս անգամ Լեռն Մարյանը եկավ ներկայացումը վերջանալուց հետո և հայտնեց, որ Դերենիկը շուտ գնաց տուն և խնդրեց, որ ինքը ինձ տուն հասցնի (Լեռն Մարյանն էլ ուներ 2-րդ կինը, բայց ոչ պաշտոնականացված և նրանից՝ մեկ տղա): Ես ասացի. «Ոչ, ես ինքու կզնամ, միշտ էլ ես մենակ եմ գնում»: Նա ինձ կատակով ասաց. «Դե լավ, մեկ անգամ էլ ես փոխարինեմ Դերենիկին»: Ես պատասխանեցի. «Ոչ մի դեպքում: Ես Դեմիքյանի նույնիսկ ձեռնափայտն եմ սիրում»: Եվ այս խոսքն էլ հասել էր Վարպետին, և նա կատակով ասել էր. «Լեռն, տեսա թ....»: «Ես նրա ձեռնափայտն եմ սիրել», այդպես էլ ասում էին շատ տեղերում՝ որպես անեկդոտ: Մի խոսքով, զիտեր շատ համով ու հոտով կատակներ անել:

Նա շատ էր սիրում զալ մեզ մոտ, նստել կողքին՝ բազմոցին, և ինձ հետ այնպիսի անկեղծ զրույցներ էր անում, որ ես ուղղակի հիանում էի, թե ինչպիսի հոգեբան էր: Այնպիսի թեմաների շուրջ էր զրույցում, որ ես աշխարհից վերանում էի և երբեք նրա տարիքը չէի տեսնում: Եվ, առհասարակ, նրա տարիքը չէմ նկատել: Հաճախ ասում էր. «Վարծես թե մենք որոշ հարցերում իրար լավ ենք հասկանում. ես էլ փոքր հասակում (8-10 տարեկան) մեկ-մեկ նեղ շրջա-

նակներում դերասանություն եմ արել, սիրել եմ երաժշտությունը, իսկ 14 տարեկանում կարդացել եմ բոլոր հեղինակներին»:

Ինձ ասում էք. «Դու շատ բարի սիրու ունես և երբեք ինձ որևէ հարց չեւ տալիս»: Ես, ճիշտն ասած, անհարմար էի զգում որևէ հարցի մասին խոսել, բայց նա հարց ու պատասխանի միջոցով ինձ ավելի էր ճանաչում:

Երբ վերադարձավ Լեռնային Ղարաբաղից, երկրորդ օրը եկավ մեր տուն, ըստ իր սովորության՝ հարցրեց տղայիս՝ Ինադիկի (մեծ տղաս) գործերի և ուսման մասին, իսկ Վիգենի համար ասաց, որ նրա մասին չի ուզում խոսել, քանի որ նա լավ խավիծ ուտող է և, որեւն, առողջ: Երբ ճաշեցինք, երեխաները գնացին, իսկ ես ու ինքը միասին էինք, նա ձեռքը դնելով զլիխս՝ ասաց. «Գարու ին, ես բավականին լավ զգացի Լեռնային Ղարաբաղում, այնուեղ երիտասարդ աղջիկներ կային, և իմ տրամադրությունը բավականին բարձրացրին իմ ստեղծագործական աշխատանքներում»: Ես շատ ուրախացա. «Այո՛, Դուք ասում եք, որ մարդն իր իրավունքների մեջ պետք է ազատ լինի...»: Նա միայն ասաց. «Մեծ հոգու տեր կին ես, իմ Վիգենին աշխատիր լավ նայել և իմ մահից հետո լավ եղիր Սարիա Սիխայլովնայի հետ, նա կլինի քո լավ բարեկամը՛: Եվ, իրո՞ք, Սարիա Սիխայլովնան իր մարդկային նկարագրով ու գիտակցությամբ եզակի էք. այդպիսի անձնավորություն չկա ու, ենթադրում եմ, չի կարող լինել:

Մի քանի խոսք Սարիա Սիխայլովնայի մասին (Դ. Դեմիրճյանի կինն ազգությամբ ուսւած էք):

Որքան էր սիրում փոքրիկ Վիգենին, ավագ Վիգենին էլ ինքն է պահել և իմ ավագ որդուն՝ Ծնադիկին. ոչ մի անգամ, ոչ մի ատիթով նա ինձ ոչինչ զգացնել չի տվել, Վիգենի հետ պարապում էր ուսւաց լեզու: Երբ երեխայի հետ գնում էինք Վիսլովոդսկ, միշտ (գնալուց մի քանի օր առաջ) ասում էք. «Սևապաման մածուն քամեր և վերցրեք Ձեզ հետ, որպեսզի ճանապարհին Վիգենին ջուր չտաք, երեխային վնաս կտա, ջրի հետ խառննեք քամած մածունը»: Նրա որդին (ոչ Դեմիրճյանից) այնքան էր կապված փոքր Վիգենի հետ, որ երբ զայիս էր Երևան, շատ անկեղծ էր դեպի նա: Նատան (Դեմիրճյանի քրոջ աղջիկը) ինձ հանդիպեց շուկայում և ասաց. «Սարիա տյուտյան այլևս չի խոսում, աչքերը փակ է և մահամերձ է»: Ես և փոքր Վիգենն անմիջապես գնացինք (Ելակ վերցրինք, մենք հաճախ էինք գնում նրան տեսակցության, նա մեծ բավականությամբ էր ուզում մեզ տեսնել): Երբ ներս մտանք, իրոք, աչքերը փակ էին և, կարծեք թէ, հոգեվարքի մեջ էք: Երբ փոքրիկ Վիգենը կրացավ նրա դեմքին և ասաց. Շատույա Սարիա, նա մի պահ բացեց աչքերը, Վիգենին դեպի իրեն քաշեց ու մի կերպ ասաց. «Վիգեն», և մի քանի վայրկյան միասին զրկված մնացին: Ես ու Նատան զարմացանք, թէ այդ վիճակում ինչպես նա Վիգենին ճանաչեց:

Նա եզակի կին էք:

Վարպետը իրո՞ք փիլիսոփա էք: Եթէ Սարիան ուշ մահանար և մի քանի տարի ավելի կյանք ունենար, իմ Վիգենի վիճակն ավելի լավ կլիներ, նրան չէին հալածի հարազատները շահի համար:

Վարպետի մոխրագույն կոստյումի մասին: Ավագ որդիս բավական երկար հասակ ուներ և հավանել էր մոխրագույն, զոլավոր մի կոստյում (պոլիտեխնիկական ինստիտուտի 4-րդ կուրսում էք սովորում): Ես անմիջապես տղայիս

ցանկությունը կատարեցի, կոստյումը բերեցինք, հազավ մի քանի անգամ և մի օր էլ ասաց, որ իրեն դուր չի գալիս. տղաներն ասել են, որ իրեն չի սազում: Այդ պահին Դեմիրճյանն ասաց. «Ռադի կ ջան, մի հազիր, որ դուրդ չի գալիս, ապա ես փորձեմ: Նա հազավ, և վրան շատ լավ նստեց ու անմիջապես փառաթել տվեց, իմացավ արժեքը: Հաջորդ օրը դրամը բերեց: Շատ վիրավորվեցի: Նա ասաց, որ դա իր գործն է, թող տղան իր ճաշակով նորն ընտրի: Այդքան բարի ու ազնիվ մարդուն ինչպես կարելի է չսիրել, չհարգել, չխոնարհվել անգամ նրա ձեռնափայտի առաջ: Նա իմ որդուն ընդունում էր ինչպես հարազատ զավակի, երկու Վիզեններից չէր տարբերում: Եվ հիմա, երբ Վարպետին այդ կոստյումն ցուցադրում են հեռուստատեսությամբ, մեծ տղաս ասում է. «Իմ կոստյումն անմահացել է» (նա այժմ կոմունիստ է և աշխատում է շինվարչությունում՝ որպես պետ):

Մի անգամ եկավ մեզ մոտ և ծիծաղելով ասաց ինձ. «Ավետիքը հարցրեց. «Դերենի կ, այդ ինչպես ո՞ւ է, որ Սարիան ու Գայանեն (Գարունը) այդքան լավ են իրար հետ»: Ես ասացի, որ երկուադ էլ անշահախնդիր մարդիկ եր»: Քանի անգամ Սարիան ինձ ասել է, թե ինչու ՞ես փող չեմ վերցնում Դեմիրճյանից, երբ նա տալիս է: Ասացի, որ աշխատում եմ, այդ պատճառով:

Առհասարակ, հանձին Դեմիրճյանի ՝ ես միայն տեսել եմ մարդուն, գրողին, մեծ փիլիսոփային, ազնիվ ու անշահախնդիր, կիրք ու կոնկրետ և ուշադիր մարդու: Որքան ուշադիր էր իմ նկատմամբ մանավանդ Սոսկվայում (1941 թ., առաջին տասնօրյակի ժամանակ): Նա ինձ տանում էր բոլոր թանգարանները, տեսարժան վայրերը, բացատրում էր՝ ինչպես երեխայի: Ես առաջին անգամ էի լինում Սոսկվայում, նրա մեղմ ու կիրք մոտեցումն ինձ կախարդել էր: Վերելակով բարձրանալիս՝ ես վախեցա (առաջին անգամ էր): Նա այնպէս հուզվեց և ինձ ասաց, որ իրեն գրկեմ ու աչքերս փակեմ:

Ցավոք, ինձ հետ դժբախտություն պատահեց. (Գայանե Ավետիսյանին ձերբակալել էին խանութում պակասորդի պատճառով – Լ. Ա.): Երբ նրա մոտ էին գնացել և պատմել իմ մասին (հիմա կա Նատալյան, աշխատում է որպէս հաշվապահ, նա էլ ինձ հետ էր 1956 թ.), Վարպետը միայն ասել էր. «Շուտով ամեն ինչ կանեմ, որ Վիզենս որք չմնա», և այնպէս հուզված էր ասել, որ նրա աչքերից արցունքներ էին հոսել: Եվ երբ ես Վարպետի մահվան լուրը լսեցի, բանտի հիվանդանոցում էի, որից հետո այլս չեմ զգացել՝ ինչ է կատարվել, ինձ հետ, և այդտեղից ինձ տեղափոխեցին 1957 թ. քաղաքի հիվանդանոց միայն ու միայն Ավ. Բասիալյանի խնդրանքով: Նա գրել էր. «Մեծարգոն Շմավոն ջան, աշխատեք Դեմիրճյանի տղայի մորք շուտ ազատել այդ հիվանդանոցից, Դերենիկը չկա, երեխան մեղք է, և իրոք նա (Գ. Ավետիսյանը – Լ. Ա.) անփորձ էր (արվեստ և առևտուր)»:

Պետք է ասեմ, թե որքան մեծ հոգու տեր էր տիկին Սոֆիկը, որքան է հետաքրքրվել իմ գործով, նրա հետ միասին և հարսը՝ Բելան, որի հետ թատրոնում միասին էինք աշխատում: Որքան նամակներ եմ գրել Բելային. այդ նամակները գտնվում են Ավ. Բասիալյանի թանգարանում: Քանի-քանի անգամ է Բելան եկել ինձ տեսակցության: Այդ իմ ծանր ճակատագիրը պակաս ազդեցություն չունեցավ իմ փոքրիկ Վիզենի վրա: 14 տարեկան էր՝ չկային հայրը և մայր... Եվ այդ երեխան երբեք չփշացավ, վաս շրջապատ չընկալ՝ մինչև իմ պատվելը: Ես անմեղ էի և խանութից գլուխ չհանելու պատճառով ընկա այդ

արհավիրքի մեջ, այդ խանութում ընդամենը աշխատել էի 6 ամիս և հազիվ 10 անգամ խանութում եղած լինել:

Մյժմ ես հաճախ եմ գնում և ծաղիկներ դնում Խսահակյանի և նրա կնոց շիրմաքարերին (Կոմիտասի ազգու). նրանք ինչքան ոգնություն ցույց տվեցին իմ երեխային ու ինձ: Շատ կարելի է գրել, բայց դառը հուշերը ինձ թույլ չեն տալիս գրել, և ես հիվանդանում եմ հոգեպես: Եվ այն լավ հուշերը, որոնք կապված են Շեմիրճյանի հետ, որոնցով ես հիմա ապրում եմ, երբեք ոչ մի տղամարդ՝ լինի գրող, լինի ամենազետ, երբեք ու երբեք իմ կյանքում Շե-ՄԻՐՃՅԱՆ լինել չի կարող:

Երբ ես սկսեցի վերիիշել իմ հուշերը Շեմիրճյանի մասին՝ Սոսկվան, Հայրենական պատերազմը, հոգեկան ծանր վիճակի մեջ ընկա և որոշ ժամանակ հիվանդացա: Հիմա արդեն լավ եմ զգում. այսր, դժվար է այդպիսի հարազատ, անշահափառիր, առանց հետին մտքերի տղամարդուն մոռանալ: Կանայք առհասարակ չեն մոռանում ոչ վատը, ոչ լավը:

Երբեմն, երբ իմ աշխատավայրում որոշ մարդիկ (տնօրենը կամ մեկ ուրիշը) դիտողություններ էին անում ոչ արդարացի (երեկի նրանք էլ իրենց միտումներն ունեին, ես դեռ երիտասարդ էի), ես մտքում ասում էի. «Այսր, դուք շատ մանր եք և ձեզ չի կարելի համեմատել նույնիսկ Շեմիրճյանի ձեռնափայտի հետ»:

Երբ մենք Սոսկվայում էինք, ապրում էինք տարբեր հյուրանոցներում: Վարպետը և անվանի դերասանները «Սոսկվա» հյուրանոցում էին տեղավորված: Բայց փորձերից կամ ներկայացումից հետո (հաճախ ցերեկները), Վարպետն ասում էր. «Գնանք ինձ մոտ հյուրանոց, այնտեղ միասին կճաշենք, ոչ թե ուստորանում, այլ հենց համարում»: Մի անգամ (իր կարգադրությամբ) պառկեցի հանգստանալու, դեռ չէի քնել, երբ ներքնից (Վարպետի պահանջով) բարձրացալ մատուցողը և հարցրեց՝ ի՞նչ ենք ցանկանում: Այդ վայրկյանին Վարպետն ասաց. «Տիկիր, մադամ սպիտ»: Երբեք ու երբեք չեմ մոռանա: Երբ ամեն ինչ պատրաստ էր, զգուշ մոտեցավ, ես անմիջապես վեր կացա, ինձ կարգի բերեցի, լվացվեցի, և մենք միասին ճաշեցինք: Որքան երջանիկ էի զգում ինձ: Եվ այդ բոլորից հետո, երբ իմ որոշ դեկալարներ երբեմն ինձ հետ դուռը են խոսում, դա ինձ համար շատ տարօրինակ է, և իսկույն հիշում էի Վարպետի խոսքերը. «Տիկիր, մադամ սպիտ»:

Մի անգամ, երբ միասին նախաճաշում էինք, զանգ եղավ: Նաիրի Զարյանի կինն էր՝ Սիրանը, որը ցանկացավ զալ Վարպետի մոտ հյուրանոց: Վարպետն ինձ ասաց. «Գարո՞ ի՞ն ջան, ինձ ներիր, հիմա դու գնա, որ նա չգա այստեղ մեզ միասին տեսնի, հետո մենք կշարունակենք մեր նախաճաշը»: Մինչ այժմ էլ չեմ հասկանում, թե ինչու նա այդպես ասաց: Տիկին Սիրանը միշտ բարևում էր ինձ և իմ նկատմամբ վատ չէր: Ես գնացի մեր հյուրանոցը: Կես ժամ շանցած՝ Վարպետն եկավ իմ հետևից, և մենք միասին նորից գնացինք: Ահա թե որքան ուշադիր էր նա իմ նկատմամբ:

Սայրս մահացավ 1950 թ.: Վարպետը զիտեր, որ կարճ օրեր են մնացել, միշտ ինձ հուսադրում էր և ասում. «Երբ մայրիկիդ մի բան պատահի, անմիշապես զանգիր»: Սայրս մահից մի քանի օր առաջ ինձ ասաց. «Եթե բոլոր զրողներն այսպիսի խելքի տեր լինեն, աշխարհի գործերը լավ կգնան: Իմ մահից հետո դու հույսդ դիր միայն Շերենիկի և Սարիա Միհևալովնայի վրա»:

Առավոտյան մայրս մահացավ: Ես ավելի ուշ զանգեցի Դեմիրճյանին, և չանցած երկու ժամ՝ Սարիա Միխայլովնան եկավ և շոշափելի գումար բերեց ինձ, միսիթարեց: Ես գումարը չէի վերցնում և շատ խիստ վիրավորվեցի. ինձ համար լավ կլիներ, որ Վարպետը զար. «Ես ունեմ եղբայրներ և աշխատում եմ, դրա կարիքը չունեմ», – ասացի: Նա պատասխանեց. «Դուք զիտեք, որ նա այդպիսի տեղեր չի գնում, նա կզարդում ենու, մյուս օրը»: Իսկ չէ որ Վիզենի ամրող իննամբը մայրս էր տանում:

Ես Վարպետի մեջ տեսել եմ լավ գրողի, լավ դրամատուրգի, լավ մարդու, նրա «Քաջ Նազարը», «Ավելորդը» և ճիշտ ժամանակին գրված «Վարդանանքը» դարեղար կապրեն: Նա այնքան բովանդակալից գրույցներ էր ունենում ինձ հետ, որ ես վերանում էի. պատմում էր Ավ. Խահակյանի, Թիֆլիսի Վերնատան, գրողների հանդիպման մասին, Շվեյցարիայում լինելու մասին: Ասում էր. «Այս ինչ բախտ է, որ Խահակյանը և Դուք ապրում եք նույն փողոցում» (Գնունի էր, հետո դարձավ Պուշկինի): Կամ մեր տնից պետք է զնար Խահակյանի մոտ (այնքան մտերիմ էին, այդքան ջերմ ընկերություն հնարավոր չէ նկարագրել): Եվ դա էր պատճառը, որ տիկին Սոֆիկը ինձ հետ շատ ու շատ բարի և բարեկամական հարաբերությունների մեջ էր:

Մի անգամ եկավ ու տեսավ, որ ես ընթերցում եմ «Ավելորդը». արդեն 4-րդ անգամ էր: Շատ էի կարդում նաև «Պույ-պույ մկնիկը», որ սովորեցնեմ Վիզենին (հիմա Դեմիրճյանի թռոն է արտասանում դպրոցում և այն էլ ինչպիսի բավականությամբ և ասում է. «Իմ պապիկն է գրել՝ Դեմիրճյանը, տատի կը, ես զիտեմ»):

Դեմիրճյանը շատ անհանգիստ բնավորություն ուներ, մանավանդ ստեղծագործելիս: Երբ մեկն ինչ-որ դիտողություն էր անում՝ դրական կամ բացասական, երկուսի համար էլ հուզվում էր և չէր սիրում, երբ իրեն գովերգում էին իր ներկայությամբ:

Շատ էր սիրում, որ մարդիկ խոսեն ճիշտ գրական լեզվով (մանավանդ ուսանողները և աշակերտները): Միա մի դեպք. միասին զնում էինք թատրոն, տրոլեյբուսում երկու աղջիկ՝ աշակերտուհիներ, խոսում էին և իրար ասում, թե վաղը ինչ դասէր ունեն: Մեկն ասաց՝ «աշխարհ» (այսինքն՝ աշխարհագրություն), մյուսն ասաց՝ «թվար» (թվաբանություն), և՝ ոռուսերեն էին խոսում, և՝ հայերեն: Վարպետն իր ձեռնափայտը շատ զգուշությամբ մեկնեց այդ աղջիկներից մեկին և ասաց. «Խոսեք մաքուր հայերենով՝ թվարանություն, աշխարհագրություն: Կամ մ խոսեք լրիվ ոռուսերեն ու վերջացրեք ոռուսերենով, կամ մ հայերեն՝ հայերենով վերջացրեք, բայց, ցավոք, երկու լեզուներով էլ ճիշտ չխոսեցիք»: Մեկն այնպէս նայեց զայրացած, բայց անմիջապէս շիկնեց և կամաց ընկերուհուն ասաց՝ Դեմիրճյանն է: Եվ հաջորդ կանգառում անմիջապէս իջան:

Նա շատ ուրախացավ, երբ իմացավ իմ մեծ տղայի ամուսնության լուրը: Ճիշտ է, այդ օրը չեկավ, բայց մյուս օրը եկավ և իմ մեծ հարսի հետ բավականին կիսվեց, իսկ իր մահից հետո Ռադիկի կինը՝ Հայկուշը, միշտ կապի մեջ է եղել Ավ. Բասիակյանի ընտանիքի հետ:

Մինչ այսօր էլ կան մարդիկ, որոնք ինձ անհամեստ հարց են տալիս Դեմիրճյանի տարիքի մասին: Ըստ երևոյթին, դրանք դասվում են քաղքենիների շարքին: Ինչ խոսք, տարիքը մնում է տարիք, ո՞վ կարող է ժխտել 30 տարվա տարբերությունը, բայց չէ՞ որ նա Դեմիրճյանն էր, չէ՞ որ նա հանձար էր: Ես նրան երբեմն ասում էի քաշվելով «Վարպետ, ես Ձեզ մոտ մի փոքրիկ ճնադուկ ես իմ պատրաստվածությամբ, չէ՞ որ Դուք ավելի լավ երկրպագուներ ունեիք և նրանցից որդի կունենայիք, գուցե և գրող կլիներ Ձեր կինը, այն, այդ գաղտնիքն ուզում եմ իմանալ»: Վարպետը պատասխանում էր: «Ամենակարևորը պետք է լավ մարդ լինել, բայց այդ հարցը՝ ինչո՞ւ ընտրեցի քեզ, թող լինի վերջին անգամ, որ դու քեզ այդպես ընկճած զգաս: Դու իմ Գարունն ես, միշտ էլ կմնաս գարուն, ինքը էլ վատ բանաստեղծություններ չես գրում»: Նա ծիծառեց ու բարի հայացքով ինձ շոյեց, և դա մի աշխարհ էր ինձ համար: «Ես քեզ մի բան պատմեմ, իրական. ես Մոսկվայում էի (թիվը, ճիշտն ասած, չեմ հիշում, բայց Մարիա Միխայլովնան կար): Պատմեց, որ մեկի միջոցով ծանոթանում է մի տիկնոց հետ (վաղուց է եղել), որն ունեցել է բարձրագույն կրթություն, շատ պատրաստված և գեղեցիկ կին է եղել: «Մոտավորապես որոշել ենք, որ զանք Երևան, – պատմում է Վարպետը, – նա առանձին կապրի՝ մինչև մեր հարցերի լուծումը...»: Մյուս օրը նրա ընկերուին Դեմիրճյանը հարցնում է, թե ի՞նչ տպավորություն է թողել նրա վրա (այդ կինը Մոսկվայի հայ էր): Նա Վարպետին ասում է. «Ես չեմ կարող նրա տպավորությունն անկեղծ չասել: Նախ՝ ասաց՝ տարիքային մեծ տարբերություն կա, բայց գրող է, և ես շատ հակում ունեմ լավ հազնվելու, պետք է Վարպետին հասկացնես, որ վաղը ինձ համար (մինչև Երևան գնալը) գեղեցիկ կոշիկներ և զգեստներ գնի»: [Պատմում եմ այնպես, ինչպես ինձ է պատմել 1941 թ. դեկտեմբերի 21-ին, երբ մենք վառելիք չունեինք, մանղալում կրակ էինք արել, կողքը նստել, Վիգենը դեռ չկար (նա ծնվել է 1943 թ., հունվարի 5-ին): Այդ օրը նա ինձ նվիրեց «Գարուն» բանաստեղծությունը]: «Առավոտյան այդ կինը զանգեց, որ զա, և միասին նախաճաշենք, – պատմում է Դեմիրճյանը: Եկավ: Ես շատ բարձր տրամադրությամբ նրան ընդունեցի և ասացի. «Մեր Երևանը Դուք շատ կհավանեք»: Նա ասաց. «Ես մեկ անգամ եղել եմ, շատ վաղուց»: Նախաճաշից հետո նրան ասացի. «Գնանք որոշ զնումներ կատարենք Ձեզ համար՝ մինչև Երևան գնալը»: Նա այնպես ուրախացավ, ու բարձր տրամադրությամբ զնացինք Մոսկվայի ԳՈՒՄ-ը: Նախ՝ ես նրան տարա կոշիկների բաժին, ասացի՝ ընտրեք մի բանի զույգ և ինչպիսին Ձեզ դուր կգա: Վերցրեց երկու

զույգ կոշիկ, որից հետո գնացինք հազուստեղենի բաժինը, և ասաց. «Ես ուզում եմ այնպիսին ունենալ, որ Երևանում ոչ մեկը չունենա»: (Դա այնքան տհաճ էր ինձ համար), բայց ես իմ անելիքը գիտեի: Մի խոսքով, ամեն ինչ գնեցինք, ու խանութից վերադառնալիս ասաց. «Տանենք հյուրանոց, հետո դուրս գանք»: Ասացի. «Ո՞չ, ես շտապ տեղ ունեմ գնալու, տարեք Զեզ մոտ, Երևան գնալուց ես Զեզ իմաց կտամ նախօրոք: Դեռ երկու օր ինձ չզանգեք. ես զբաղված եմ»: Եկա հյուրանոց, նույն օրը տումսակ վերցրեցի ու վերադարձա Երևան: Հանձնարարեցի հյուրանոցի ադմինիստրատորին, որ տիկինը զա՝ ինձ հարցնելու, իմ նամակը փոխանցի իրեն: Փակ ծրարը թողեցի ու անմիջապես նույն օրը մեկնեցի Երևան: Ծրարի մեջ զրել էի. «Ինչ Զեր ընկերուհուն ասել էիք, որ ինձ ընդունում եք միայն իբրև գրողի, գիտեմ: Զեր ցանկացածները գնեցի, Երևան գալու մասին ինչ խոսել էինք, մոռացեք. այլևս մեջ ամեն ինչ վերջացած է»:

Անցավ մի քանի օր: Հեռախոսը զանգում է, վերցնում եմ և լսում նրա ձայնը. «Ես եկել եմ հյուրանոց, խնդրում եմ, անցնեք ինձ մոտ կամ ես կզամ Զեզ մոտ. Զեր զրած նամակը ինձ խիստ վիրավորել է, և ես ճիշտ չեմ վարվել և չէի կարծում, որ իմ մտերիմ ընկերուիին կարող է Զեզ ամեն ինչ պատմել, այլևս նման բան չի կրկնվի»: Ես ասացի. «Ո՞չ Շուք կզաք և ո՞չ էլ՝ ես»: Ահա և բոլորը: Զեմ սիրել, չեմ սիրում այն մարդկանց, որոնք ձգուում են նյութականին, ես սիրում եմ մեծ հոգու տեր մարդկանց, ինչպես մեր և քո սիրելի Մարիա Միհայլովնան է»: (Միակ դժբախտությունն այն է, որ իմ քույրը՝ Վարսենիկը, և Մարիան իրար տանել չեն կարող):

Վարպետն ինձ զգուշացրեց, եթե քույրը գալիս է երեխային տեսնելու (Վիզենին), չասեմ Մարիային, եթե Մարիան է գալիս, չասեմ Վարսենիկին: Ես այդպես էլ անում էի:

Վարպետն անշափ սիրում ու հետաքրքրվում էր Մարիայի տղայով: Նրա որդիին էլ հրաշալի մարդ էր, ուներ լավ կին ու մի սիրունիկ աղջիկ:

Երբ ես ինձ կաշկանդված էի զգում (դե, Մարիա Միհայլովնան զարգացած, կարդացած մանկավարժ անձնավորություն էր), ինձ լավ էր հասկանում և միշտ ասում էր. «Շուք ոչ մեկի կարծիքը հաշվի միք առնի, միայն Վիզենին լավ նայեք, որպեսզի առողջ լինի և Դերենիկի ազգանունը շարունակի»: Եվ ինքն էլ Վիզենին շատ էր սիրում: Ավագ տղայիս էլ: Եթե որեւէ բանի կարիք ունենար, մեծ տղաս անմիջապես կանեք:

Երբ որևէ տեղ էին հրավիրում, միշտ սեղանի ծայրին էր նստում: Իմ հյուրերն աշխատում էին նրան սեղանի մեջտեղում տեղ տալ բայց նա ասում էր. «Ոչ, եթե մի բան լինի, այնտեղից դուրս պրծնելն ավելի հեշտ է»:

Երբ 1953 թ. ես, փոքրիկ Վիզենը և Վիզենի դայակը գնում էինք Կիւլովողսկ, ես հիվանդ էի (սիրտս), Վարպետը եկավ մեզ ուղեկցելու, իսկ ես մոռացել էի ինձ հետ վերցնել «վալերիաննի կաթիլներ.: Այդ ժամանակ Վարպետը շփոթվեց, բայց մեզ հետ նույն կուպեում էր պրոֆ. Պետրոսյանը, շատ կատակասեր մարդ, գլուխը հանեց պատուհանից և ասաց. «Դե, Դերենիկ, ոչ մի կապի, եթե ես նրա մոտ եմ, նա շատ լավ կզգա»: Վարպետը ժպտալով ասաց. «Դե իմացիր, լավ տեղ կհասցնես»:

Վարպետն աշխատում էր «Մեսրոպ Մաշտոցի» վրա (Դ. Դեմիրճյանի այս վեպն անավարտ է - Լ. Ա.) և երբեմն ասում էր. «Այնքան թերթերին ու ամսագրերին հոդվածներ եմ գրում, որ չեմ կարողանում «Մաշտոց» վերջացնել: Մեկ էլ ուզում եմ մինչև «Մաշտոցի» ավարտելը գրել շինարարների մասին: Ոչ ոք չի գրում, որ այսպիսի շենքեր են կառուցում»:

Երանի հիմա լիներ ու տեսներ, թե ինչ շենքեր ու բարձրաբերձ տներ են կառուցվում:

1942 թ. հունվար ամսին մեծ եղբայրս (երաժիշտ Մաթևոս Ավետիսյանը, որին շատ լավ գիտի անվանի գրող Սերո Խանզադյանը) Դեմիրճյանի հետ շատ մտահոգ զրուցում էին Հայրենական պատերազմի մասին: Եղբայրս հարց տվեց Վարպետին. «Ի՞նչ եք կարծում, այս ահեղ ու անսպասելի պատերազմն ինչո՞վ կավարտվի, մենք կհաղթե՞նք»:

Դեմիրճյանը, մի պահ լոելուց հետո, ասաց. «Ուստի ժողովուրդը կհաղթի»:

Վարպետը շատ էր ցանկանում արու զավակ ունենալ, որը իր ազգանունը կշարունակի ու որի անունը կդնի Վիզեն. այդ անունը նրա համար շատ թանկ էր: «Խահակյանն էլ Վիզեն ունի, ես էլ պետք է Վիզեն ունենամ»: Եվ իրոք, նրա իդաք կատարվեց, այդ նույն թվին՝ 1943 թ., Էղվարդ Խոջիկի կինն էլ նույն պալատում էր պառկած, որտեղ ես (հրաշալի կին էր, կիրթ և շատ մարդկային՝ Մարգոն): Նա էլ ունեցավ տղա՝ Բագրատիկը, ես՝ Վիզենը: Եվ այդ ծանր պահերին թե՝ Խոջիկը, թե՝ Դեմիրճյանը, եթե մի լավ բան ձեռք էին գցում, անմիջապես բերում էին հիվանդանոց՝ մեզ: Դեմիրճյանը բերեց մի քանի մանդարին, իսկ դա արդեն մեծ բան էր պատերազմի ժամանակ: Ես ու Մարգոն միասին կերանք:

Մի քանի խոսք փոքրիկ Վիզենի մասին. ծնվել է 1943 թ. հունվարի 5-ին, Վիզենի կինը 1945 թ. ծնված է, փետրվարի 17-ին, Դեմիրճյանի ծննդյան օրը: Վիզենն ունի երկու աղջիկ: Դեմիրճյանի ցանկությունը կատարվեց. ասում էր՝ իմ ազգանունը կտաք: Վիզենի կինն ազգությամբ ուսւած է, հոյակապ գիտի հայերեն, երեխաներին տվեց հայկական մտուր-մանկապարտեզ, երեխաները լավ հայերենին տիրապետելուց հետո ընդունվեցին ուսւական դպրոց: Վիզենն աշխատում է որպես մանկապարժ, վերջացրել է մանկավարժական ինստիտուտը, իսկ կի-

նը՝ պետհամալսարանի մեխիֆաակը, աշխատում է որպես ինժեներ Մերգելյանի ինստիտուտում: Բազմակողմանի զարգացած, շնորհքով ու լավ դաստիարակ է, սիրող մայր ու ամուսին: Մեծ աղջիկը շատ է ընդունակ (քաշել է պապիկին), խոսում է զրական ոռուսերենով և հայերենով: Լավ կյաներ, եթե Դեմիրճյանը ողջ լիներ և տեսներ, յօկ ինչ անուշիկ քոռնիկներ ունի և ինչ հիանալի հարս: Երեկի Վիզենն էլ հետազայտում հոր մասին իր հուշերը կզրի՝ որքան հիշում է (դե, 14 տարի ապրել է հոր հետ):

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ (Գարուն)
Երեան, Կալինինի փող. 29,
1-ին մուտք, 1-ին հարկ, բն. 1: